#2
ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄՍԿԱ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
2017

@RightNgo Right Side NGO +37411880770 rightsidehumanrights rightsidengo@gmail.com

TGEU Transgender Europe

RIGHT SIDE HUMAN RIGHTS DEFENDER NGO

For the Trans Day of Remembrance, in cooperation with Heinrich Böll Foundation e.V.

HEINRICH BÖLL STIFTUNG

Կազմակերպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանի անդրադարձը

«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության համար առաջնային է բարձրացնել տրանս համայնքի խնդիրները և փորձել դրանց լուծում տալ:
Նոյեմբերի 20ը նշվում է որպես տրանս անձանց հիշատակին նվիրված օր՝ նվիրված բոլոր այն տրանսգենդեր անձանց ովքեր զոհ են դարձել տրանսֆոբիային:
«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության թիմը իր հարգանքի տուրքը մատուցեց այն բոլոր տրանս անձանց հիշատակին, ովքեր զոհ են դարձել տրանսֆոբիային՝ Գյումրիում, Վանաձորում, Դիլիջանում, Երևանում և Թբիլիսիում կազմակերպելով մոմավառության արարողություններ:
Հայաստանի հանրապետությունում տրանս մարդիկ հասարակության կողմից ենթարկվում են բազմաթիվ ճնշումների, հալածանքների և բռնությունների: Ուստի մեր աշխատանքները տարվում են հասարակության հետ, որպեսզի նվազեցվի բռնությունը, ատելությունը և ատելության կոչերը տրանս անձանց նկատմամբ:
Իրավունքի կողմ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը իր առջև է դրել մի նպատակ, որտեղ Հայաստանը պետք է դառնա ապահով և բարեկեցիկ երկիր տրանս անձանց համար:
Մեր համար շատ կարևոր է համագործակցությունը պետական պաշտոնյաների, իշխանությունների և կառավարության հետ: Նոյեմբեր ամիսը մեզ համար բազում նվաճումներով լի ամիս էր, պայմանավորված մեր աշխատակազմի «Գենդերային ակադեմիայի» մասնակցությամբ և մեր համայնքային ապահով կենտրոնում տեղի ունեցած բազում միջոցառումներով:

«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահ
Լիլիթ Մարտիրոսյան

«Տրանս անձանց կարքիների գնահատում առողջապահության ոլորտում»

Նոյեմբերի 3-ին ,Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ ուղղված միջոցառումները համակարգող հանձնաժողովի «Համայնքային ներգրավվածություն, մարդու իրավունքներ, գենդերային հավասարություն» աշխատանքային խմբի համակարգող՝ Մարիամ Մուրադյանը, «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերերպության համայնքային կենտրոնում անցկացրեց Ֆոկուս Խումբ ուղղված համայնքային կարիքների գնահատման ու կարողությունների զարգացման վերաբերյալ:
Համայնքի ներկայացուցիչները քննարկեցին զանազան խնդիրներ, որոնք առկա են համայնքի ներսում և փորձեցին գտնել լուծումներ այդ խնդիրներին: Նաև քննարկվեց պետական մարմինների, , հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության կարևորությունը և համայնքի ներգրավվածությունը :



Վերջ դի՛ր բռնությանը տրանս անձանց նկատմամբ

Տրանսֆոբիային զոհ դարձած տրանս անձանց հիշատակի օր

«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը տրանս անձանց հիշատակի օրվա կապակցությամբ՝հայտարարեց Տրանս անձանց հիշատակին նվիրված շաբաթ: Կազմակերպվեցին բազում սոցիալական և իրավական թեմաներով միջոցառումներ

Նոյեմբեր 2017
Տրանս անձանց հիշատակի շաբաթ

- 16/11/17/ Մոմավառություն Գյումրիում և Վանաձորում
- 17/11/17/ TDoR սեմինար - քննարկում - Հանդիպում համայնքի և ԼԳԲ-ների ներկայացուցիչների հետ ՝՝ Իրավունքի Կողմ ՝՝ իրավապաշտպան հասարակական կազմակերպության համայնքային կենտրոնում
- 18/11/17/ Մոմավառություն Երևանում
- 19/11/17/ Սոցիալական ֆոտոարշավի բացում և մոմավառության լուսանկարների հրապարակում #TransArmenia #TDoR17 #RightSideNGO հեշթեգերով
- 21/11/17/ Սոցիալական ֆոտոարշավի ամփոփում
- 29/11/17 Մամուլի ասուլիս, ժամը՝ 13:00

EUROPEAN ENDOWMENT FOR DEMOCRACY

RIGHT SIDE HUMAN RIGHTS DEFENDER NGO

TGEU Transgender Europe

EUROPEAN ENDOWMENT FOR DEMOCRACY

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական գովազդ տրանսգենդեր անձանց նկատմամբ բռնության և խտրականության մասին

«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը նկարահանեց սոցիալական գովազդ՝վիրված տրանս անձանց հիշատակի օրվան։
Տեսահոլովոակում պատմվում է 3 տարբեր պատմություն, 3 տարբեր մարդկանց մասին, որոնք ունեն նույն գենդերային ինքնությունը։Պատմություններում ներկայացվում է բռնությունը և խարանը ուղղված տրանս մարդկանց դեմ։
Տրանսգենդեր անձիք ապրում են մեր հասարակությունում, սովորում և աշխատում են մեզ հետն, բայց միշտ ենթարկվում են բռնության և խտրականության։ Տրանս անձիք հնարավորություն չունեն ստանալու կրթություն,անգամ չունեն հնարավորություն աշխատելու։
Տեսահոլովակի նպատակն է բարձրացնել հասարակությունում տրանս անձանց հիմնախնդիրները, մասնավորապես նպաստել տրանս անձանց նկատմաբ խարանի, խտրականության ու բռնության դադարեցմանը։ Տեսահոլովակը նկարահանվել է ի հիշատակ բռնությանը զոհ դարձած տրանս անձանց։
Հայաստանումհասարակությունը փակում է բոլոր դռները տրանս անձանց դիմաց, անգամ ձեռք բարձրացնում նրանց դիմաց։ Սոցիալական գովազդի կարգախոսն է՝

«Բարձրացրու՛ ձեռքդ հանուն հավասարության,վերջ դիր բռնությանը»

Տեսահոլովակի հղումը
https://youtu.be/7qOSZUX76Zk

EUROPEAN ENDOWMENT FOR DEMOCRACY

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Մոմավառություն Գյումրիում, Վանաձորում, Դիլիջանում, Երևանում և Թբիլիսիում

Ի հիշատակ տրանսֆոբիայի զոհ դարձած անձանց օրվա կապակցությամբ ,որը նշվում է ամեն տարվա նոյեմբերի 20-ին, մենք իրականացրեցինք մոմավառություն և ծածանեցինք տրանս դրոշը Հայաստանի մի շարք քաղաքներում ՝ Գյումրիում, Վանաձորում, Դիլիջանում և Երևանում, ինչպես նաև Թբիլիսիում՝ հարգելու և հիշելու համար բոլոր նրանց, ովքեր զոհ են դարձել իրենց գենդերային ինքնության պատճառով։

«Գենդերային ակադեմիա»

Նոյեմբերի 19ից 22ը «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության ներկայացուցիչները մեկնեցին Վրաստան՝ Թբիլիսի, որպեսզի մասնակցենAlliance for public health, Eurasian Key Populations Health Network և Robert Carr Fund կազմակերպությունների կողմից իրականացրած թվով երկրորդ «գենդերային ակադեմիա» դասընթացին:

Սեմինարին մասնակցում էին տարբեր երկրների ներկայացուցիչներ, ինչպիսիք են՝ Ադրբեջանը, Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսը, Մոլդովան և Վրաստանը:

«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության թիմը՝ նախագահ և կազմակերպության հիմնադիր, Լիլիթ Մարտիրոսյանը, դիմահարդար Մոնիկա Սարկիսյանն ու հանրային կապերի մասնագետ Վրեժ Վարժապետյանը ներկայացրեցին Հայաստանն ու կազմակերպությունը:

Դասընթացավարները՝ Կարեն Բադալյանն ու Մարինա Վարբանը մասնակիցներին սովորեցրեցին, թե ինչ է գենդերը, գենդերային ինքնությունը, գենդերի տարիքային առանձնահատկությունները և այլն:

Դասընթացի ավարտին մասնակիցները ստացան մասնագիտացման սերտիֆիկատներ և մրցանակներ:

Ֆրիդա և Էդիտա քույրերի անվան 7 մրցանակակիրներն են՝

1.Հայաստան - Լիլիթ Մարտիրոսյան
2. Բելառուս - Վալանթսինա Քասիխ
3. Վրաստան - Թամար Գախոկիձե
4. Ադրբեջան - Վուսալա Հախվերդիևա
5. Մոլդովա - Ալեքսեի Լեորդա
6. Ռուսաստան - Սվետլանա Ծուկոնովա
7. Ուկրաինա - Վերա Վարիգա

Ֆրիդա և Էդիտա քույրերի անվան մրցանակաբաշխությունը ստեղծվել է Eurasian Key Health Network-ի կողմից և խրախուսվում են այն հասարակական ակտիվիստները, ովքեր բարելավում են սեքս աշխատողների, թմրանյութ օգտագործողների, ՏՍՏների, տրանս մարդկանց կյանքը և ոգեշնչում են ուրիշներին, իրենց ակտիվիզով

Alliance for Public Health

EKHN ENDING AIDS, TB AND HEPATITIS IN EURASIA

ROBERT CARR FUND for civil society networks

«Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան հասարակական կազմակերպության Նոյեմբեր ամսվա միջոցառումները

Վստահության ակումբ - 3 հանդիպում Դիմահարդարման դասընթացներ - 13 դասընթաց Կար ու ձևի դասընթացներ - 13 դասընթաց Իրավաբանական ակումբ - 2 հանդիպում Իրավաբանական խորհրդատվություն - 4 անգամ Քուիր և հպարտ ակումբ - 2 հանդիպում Կինոդիտում - 2 հանդիպում

Մասնակիցների ընդհանուր թիվը - 53